29/07/2008
համար 226-Ն

««ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՅԼ ՏՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 5/05-Ը» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 140-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ո ւ մ է .

1. Հաստատել ««Կարգավորվող շուկայի մասնակիցների և հաշվետու թողարկողների կողմից թույլ տրված խախտումների մասին կարգավորվող շուկայի օպերատորի կողմից Կենտրոնական բանկին տեղեկացնելու կարգը» կանոնակարգ 5/05-ը»՝ համաձայն հավելվածի (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ **Արթուր Ջավադյան**

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հուլիսի 29-ի
թիվ 226-Ն որոշման

«ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՅԼ ՏՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ»
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 5/05-Ը

1. Սույն կանոնակարգը սահմանում է կարգավորվող շուկայի մասնակիցների և հաշվետու թողարկողների կողմից թույլ տրված՝ արժեթղթերի շուկան կարգավորող օրենքներով սահմանված պահանջների խախտումների մասին կարգավորվող շուկայի օպերատորի (այսուհետ՝ օպերատոր) կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) տեղեկացնելու կարգը:
2. Օպերատորի վերահսկող ծառայությունը պարտավոր է կարգավորվող շուկայի մասնակիցների և հաշվետու թողարկողների կողմից արժեթղթերի շուկան կարգավորող օրենքներով սահմանված պահանջների ցանկացած խախտման մասին խախտումը բացահայտելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Կենտրոնական բանկին՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի:
3. Սույն կանոնակարգի 2-րդ կետով սահմանված տեղեկացումը օպերատորը Կենտրոնական բանկ է ներկայացնում էլեկտրոնային կամ թղթային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկացումը ներկայացվում է ՍԻԲԻԷՅՆԵԹ համակարգի միջոցով: ՍԻԲԻԷՅՆԵԹ համակարգից օգտվելու անհնարինության դեպքում էլեկտրոնային եղանակով տեղեկացումը Կենտրոնական բանկ է ներկայացնում Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով, մագնիսական կամ էլեկտրոնային կրիչով: Մագնիսական կամ էլեկտրոնային կրիչով տեղեկացնելու դեպքում միաժամանակ ներկայացվում է կից գրություն:
4. Թղթային եղանակով տեղեկացնելու դեպքում տեղեկացումը պետք է ստորագրվի վերահսկող ծառայության ղեկավարի կողմից և կնքվի օպերատորի կնիքով:

Հավելված 1.

««Կարգավորվող շուկայի մասնակիցների և հաշվետու թողարկողների կողմից թույլ տրված խախտումների մասին կարգավորվող շուկայի օպերատորի կողմից Կենտրոնական բանկին տեղեկացնելու կարգը» Կանոնակարգ 5/05-ի»
Հավելվածի

ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՔՆԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

(տեղեկացման համարը)

----------ը

(օպերատորի անվանումը)

տեղեկացնում է կարգավորվող շուկայում բացահայտված հետևյալ խախտման (խախտումների) մասին.

N	Խախտում թույլ տված իրավաբանական անձի անվանումը	Իրավաբանական անձի կազմում գործող խախտում թույլ տված ֆիզիկական անձի անունը, ազգանունը, պաշտոնը (առկայության դեպքում)	Խախտման նկարագիրը	Խախտված իրավական ակտի անվանումը և խախտված դրույթը	Խախտման վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները (առկայության դեպքում)	Խախտումը թույլ տալու տարին, ամիսը, ամսաթիվը (հնարավորության դեպքում)	Խախտման բացահայտման տարին, ամիսը, ամսաթիվը
1.							
2.							
…							

----------_____

(Այն անձի (անձանց) անունը, ազգանունը, կապի միջոցները,, որի (որոնց) հետ կարելի է կապ հաստատել՝ կապված թույլ տրված խախտումների հետ)

(Վերահսկող ծառայության ղեկավարի ստորագրությունը)

«_____» «_____» _____ թ.

(տեղեկացման տարին, ամիսը, ամսաթիվը)

Կ.Տ.